

2512

491.99-5

9-31

1910

Գր. 4101.230

1945

47

ՕՃԱՆԴԱԿԻՉ ՁԵՌՆԱՐԿ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՓՈՔՐ ԱԶԱԿԵՐՏՆԵՐԻՆ

ՀԱՅԵՐԷՆ ՈՒՂԻՂ, ԿԱՐԴՍԱՆ ԵՒ ԳՐԵՆ ՍՈՎՈՐԵՑՆԵՂՈՒ



ԿԱԶՄԵՑ

Յ. Գապարեանց



Երկրորդ տպագրութիւն.

Փոփոխած և լրացրած.



2010

ՆՈՐ-ՆԱՆԻՉԵՒԱՆ
Տպարան Սերովբէ Աազեանի
1910

НАХИЧЕВАНЬ НА ДОНУ.
Типографія С. Я. Авакова
1910.

491.99-5
9-31

2002

Apm.

3-2367a

491.99-5

0-31

3-2367a

Am-1245

ՕԺԱՆԴԱԿԻՉ ՁԵՌՆԱՐԿ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

Փ Ո Ք Ր Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ն Ե Ր Ի Ն

ՀԱՅԵՐԷՆ ՈՒՂԻՂ ԿԱՐԴԱԼ ԵՒ ԳՐԵԼ ՍՈՎՈՐԵՑՆԵԼՈՒ

ԿԱԶՄԵՑ

Յ. Գասպարեանց

Երկրորդ տպագրութիւն.

Փոփոխած և լրացրած.



ԿՈՒՅ. № 22645

ՆՈՐ-ՆԱՍԻՋԵԻԱՆ

Տպարան Սերովաթ Աւագանի

1910

Handwritten vertical text on the left margin, possibly a library or collection identifier.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

45034 - ւեհ



29530-63

Հ ն չ ի լ ն ն ե ր

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Փ, Ժ, Ի, Լ, Խ, Ծ, Կ, Հ, Յ, Ծ, Մ, Ն, Շ, Ո, Զ, Պ, Զ, Ռ, Ս, Վ, Ի, Տ, Բ, Գ, Փ, Օ, Ֆ, կոչուում են հնչիւններ կամ տառեր:

Հնչիւնները լինում են ձայնաւոր ու բաղաձայն:

Ձայնաւոր են՝ ա, ե, է, ը, ի, ս, օ, ու, իւ, եա, եօ, հնչիւնները:

Բաղաձայն են՝ մնացած հնչիւնները:

Վ ա ն կ

Մա-նի, սա-մի, ոս-կի, ոգ-նի, ան-նա, կա-տու, եր-կու, գա-լու, լե-զու, բա-զէ, նու-նէ, ափ-սէ, ուս-տա, ձու-կը, ին-նը, դա-ւը, դու-ւը, կը-թի, ան-ծի, վանկեր են:

Ձայնաւոր և բաղաձայն հնչիւնների կապակցութիւնը կոչուում է վանկ: Ձայնաւորով վերջացող վանկը կոչուում է բաց վանկ, իսկ բաղաձայնով վերջացողը՝ փակ: Եթէ վանկը նշանակութիւն ունի, կոչուում է բառ:

(Կարգաւոր յետոյ, վերեւ օրինակից արտագրել նշանակութիւն ունեցող վանկերը:)

Բ ա ու .

Ձի, էշ, թի, իմ, քո, հա, մի, ուռ, ութ, եօթ, դու, սա, օղ, օր, ես, էծ, իւղ, դա, սա, սուր, սում, աղ, աղ, ած, ափ, ուլ, լու, ձու:

(Կարգալուց յետոյ, արտագրել բաց և փակ վանկ ունեցող բառերը):

Բ ա ու ե ը ի տ ե ս ա կ ն ե ը ը .

Բառերը լինում են միավանկ, երկավանկ, եռավանկ և այլն: Բառի մէջ, եթէ մի ձայնաւոր կայ, կոչուում է միավանկ բառ: Եթէ բառը մէկ հատ առարկայ է ցոյց տալիս, կոչուում է եզակի:

Մ ի ա վ ա ն կ բ ա ու ե ը .

Սա, դա, նա—այս, այդ, այն	} Յուցական դերանուններ
Աս, աղ, ան—էս, էդ, էն	
Ես, դու, նա	

Սա ը է. էն ու է. նա իւ է. ան եօ է. սա ես է. այն օ է. աղ ո է. այս ե է. էդ է է.

(Արտագրել ձայնաւոր հնչիւնները):

Սա, դա, նա, հա	Աղ, աղ, առ, ափ
Կայ, տայ, գայ, լայ	Ես, եդ, եկ, են
Հայ, փայ, վայ, բայ	էշ, էծ, էր, էք
Ձու, դու, բու, լու	Ուր, ուլ, ում, ուռ
Մի, ձի, թի, լի	Նոյ, խոյ, թէյ,

Դու թէյ և աղ առ: Նա ութ օր չի դայ: Սա էծ չէ, խոյ է: Դա ութ ձու է թէ՛ եօթ: Այն սով էր: Նա սուր է: Նոյ, դու

էլ մի գայ: Նա այդ չի տայ: Դա իւղ է: Ուշ է, էլ ոչ ոք չի գայ: Սա ու նա են: Նա հայ էր: Մի փայ սա է, մի փայ էլ դա: Դու այս առ, նա էլ այն:

(Այս օրինակից արտագրել ցուցական և անձնական դերանունները):

Բառի մէջ ե հնչիւնը կարգացում է ինչպէս է. իսկ ո հընչիւնը—օ:

Սար, դաս, մաղ, նախ	սիմ, կին, ցին, տիկ
Նեղ, տես, դեղ, գետ	փէշ, կէս, դէզ, տէր
Հոտ, հոր, ձող, թող	հօտ, հօր, ցօղ, քօղ
Սիւն, ձիւն, ճիւղ գիւղ, սուր, խուլ, ծուխ, լուծ.	

Նա նեղ ու մութ տուն է: Այն ձէթ չէր, այլ իւղ էր: Այս նոր դաս է: Սօս, դու կէս ժամ կաց մեղ մօտ: Գիւտ, դա թաց փայտ է թէ՛ չոր: Նոյ, մի թաս պաղ ջուր տուր: Սէթ, այս շուտ յետ տար տուն: Այս ձուն լու աեղ դիր: Էն ձուն լակ էր: Նա հօր մօտ է: Դա լաւ լոյս չի տայ: Սա դեռ խակ է: Մի կոյր կին կար մեղ մօտ: Դա սև գոյն չէ, այլ թուխ: Նա մեծ և լոյս տուն է:

Մանչ, տանձ, վանք, թուխս	հինգ, խիստ, ճիշտ, միշտ
Հեշտ, ներս, թերթ, ներկ	ցուրտ, դուրս, կուշտ, շունչ
Ձէնք, վէրք, դէպք, շէնք	հորթ, չորս, գործ, կողմ:

Սա հեշտ դաս է: Սէթ, ինձ մի գիրք տուր: Գիւտ, այս շուտ դուրս տար, իսկ այն ներս բեր: Մենք վաղ չենք գայ ձեղ մօտ: Չորս օր մեզմ ցուրտ էր: Սօս, առ այս և մի կողմ գիր: Նոյ, մի հաւ կար թուխս, սուր է: Նա թուրք չէ, այլ բուրդ է: Հինգ օր շատ տաք էր: Մենք պէտք է

շուտ գանք տուն: Դուք խօսք միք տայ, թէ շուտ չէք գայ: Դու մի ֆունտ նաւթ առ:

Յ օ դ ե ր .

Հնչիւններից՝ ը, ս, ղ, ն կոչուում են յօդեր, երբ աւելանում են անուններ ցոյց տուող բառերի վերջից: Է և ն կոչուում են որոշող յօդեր, իսկ ս և ղ՝ դիմորոշ: Դիմորոշ ղ յօդը կարգացուում է տ:

Հայր, մայր, քոյր, պապ	հայրս, քոյրս, մատս, ձեռս
Գոյրը, պապը, հայրը մայրը	հայր, նոյր, փայր, թէյր
Տատդ, մատդ, գիրքդ, քոյրդ	տունն, շունն, քոյրն, պապն

Սէթ, ուր է նոյր: Սօս, ցոյց տուր ինձ նոր գիրքդ: Գիւտ, ո՞ր ժամն է: Այն ում տունն է: Հայրս տանը չէ: Մայրդ մեր տանն էր: Այն չալ հաւը թուխս է: Այն նուար չէր, տանձ էր: Այս ջուրը սառը չէր: Նա մուկը չէր, այլ գորտ էր: Գիւտ, ձախ փէշդ թաց է: Պապս շատ ծեր է: Դուք կը գանք մեզ մօտ թէ չէ: Կիրքս տանն է: Այս խոտը տար գոմը: Սէթ, կովը և ձին տար գետը: Այն թութը գետ խակ է:

Ահա, ապա, ասան, ածա	կատու, լեզու, հեռու, մեղու
Արի, աղի, ունի, օղի	երկու, Աննա, ոգնի, ոսկի
Կիւր, կուր, կծու, թթու	Նունէ, բոպէ, բազէ, ափսէ.

Կիւրն թուաւ: Այս ծառի նուար թթու չէ: Կատուն մտաւ տուն: Նունէ, ահա քո գիրքը: Նա ունի երկու կթի կով: Ծիտը կըր գլուխ և կարձ վիզ ունի: Այն ծառի բունը հասա է: Աննան, գնան և մնան տանը: Կատուն երկար պոչ ունի: Նա գայու է այսօր կամ վաղը: Արամ, ցոյց տուր ինձ նոր գիրքդ: Սօսի հայրը գնաց գիւղը: Գրքի վրայ ի՞նչ

կայ: Ունի ծառի տակը չորս թէ հինգ հաւ կայ: Սէթը բարի տղայ է: Աննան երկու քոյր ունի: Սառան, նրա հետ գերի մի խաղա: Գիւտը հիմա գնաց այգին: Նրանց այգում չորս մշակ կայ: Նա մի գղալ դեղ խմեց: Նա, քո գիրքը նրանց մօտ է:

Եղան, ասեղ, լիլի, արօտ	մրտա, թքտա, իւղտա, ձէթտա
Դեղին, կաղին, կացին, աիկին	Սմբատ, գրպան, սմբակ, մտրակ
Յասմիկ, Գուրգէն, Յովսէփ, Յովնան	կրկնել, ճնճղուկ, թռչնակ, կնդրուկ
Ընարեց, ընթրեց, յանձնեց, կանգնեց	անհամ, անգործ, անվախ, անշունչ:

Կիւրն ծոյր թռչուն է: Այն գրքի արժէքը յիսուն կոպէկ է: Էջը նստել է կայում: Ծախն ճնճղուկ էլ են ասում: Եղան ծնօտն ուռած է: Սէթն ունի երկու գրպան: Ջին ունի չորս սմբակ: Նա այսօր շուտ գնաց դպրոց: Նրանց կարմիր ձին խրանեց: Սիպասիկ եղը քրտնել է: Կնդրուկն անուշ հոտ ունի: Ծիտը կտցում բռնել էր մի ծղօտ: Յունիս ամսին անձրև եկաւ, իսկ յուլիսին՝ կարկուտ: Մարթան կրկնեց դասը: Սօսը գետ անգործ է: Արան անվախ տղայ է: Ծառի վրայ մի թռչնակ է նստել:

Տողի մէջ բաղաձայն հնչիւնների մէջ ը չի գրուում:

Բ ա ու ե ռ ի ն շ ա ն ա կ ու թ ի լ ն ւ ը .

Նոր, սե, կանաչ, մեծ, դեղին, կապոյա	Որպիսութիւն
Շոր, թանաք, տերեւ, տուն, ծաղիկ, մատիտ	Անշունչ առարկաներ
Տասը, քսան, վաթսուն, ութսուն, հարիւր	Թուական անուններ
Գոմէշ, այծ, կով, հաւ, ոչխար	Շնչաւոր առարկաներ
Արամ, Պօղոս, Ներսէս, Մովսէս, Սէթ	Յատուկ անուններ
Եզակի	Յոգնակի
Ես, դու, նա, մենք, դուք, նրանք	Անձնական դերանուններ
Նա սա, դա (և ու և ու և ու)	Յուլայական դերանուններ
ու և ու (սրանք, նրանք, դրանք	
այս այդ, այն (
կըտամ, տար, կըտանի, կըգանք, կըգնաք,	Գործող. ցոյց տուող

Ծանօթ. Պէտք է կարգալ և ուղղահայեաց. 1 և 2 տողերը միասին. 3 և 4 միասին, իսկ 5, 6, 7, 8 և 9 տողերն էլ միասին:

Անունների վերջաւորութիւնների փոփոխութիւնները.

Բաղաձայնով և ձայնաւոր՝ ու, ա և է վերջացող անունների

մեծ մասի վերջից աւելանում են՝	(ի, ին, ից » »
ալ և ել վերջացող բառների	(ու, ուն, ուց, ում, ուվ
ի ձայնաւորով վերջացողի փոխւում է	(» » » » »

Սար, մաղ, գետ, ծով,	Ոգնի, ոսկի, գինի, սինի
սարի, հացի, գետի ծառի	ոգնու, ոսկու, գինու, սինու
կովին, հաւին, սագին, խոզին	ոսկուն, ոգնուն, գինուն
գետից, ծառից, քարից, դէզից	գինուց, սինուց, ոգնուց
ձեռով, փայտով, քարով,	» » »
գիւղում, թասում, այգում.	» » »

Միավանկ անունները յոգնակի դարձնելու համար եր պէտք է աւելացնել, իսկ զրանից աւելի վանկ ունեցողներին՝ ներ, ք և ց:

Սարեր, գետեր, ծովեր, հաւեր, սագեր, փայտեր.

Ծաղիկներ, կատուներ, մեղուններ, սեղաններ:

Եւան այսօր նոր տետրակներ գնեց: Աննան շատ գրքեր ու գրիչներ ունի: Քամին թափեց ծառի տերեւերը: Կուր գետն ու Արաքսը մեծ գետեր են: Եգները, կովերը և գոմէշները արածում են հանդումը: Թամարի մայրը պահում է շատ հաւեր, սագեր ու քաղեր: Աննան փոխեց թխած հացերը: Մեր գիւղը հեռու է քաղաքից: Մեզ մօտիկ գիւղում երկու դպրոց կայ: Պետրոսն երեկ եկաւ գիւղից: Գուրգէնը լողացաւ գետում: Նա մատիտով է գրել դասը: Վահանը շուտով դալու է մեզ մօտ: Մանուշակը մեծ է Շուշանից երեք տարով: Նրա հայրը միշտ ապրում է գիւղում: Աննան ուզեց Աշխէնից իւր ստեղը: Նա կտորով գնաց քաղաք: Մշակը մանգաղով հնձեց արտը:

Գրել, ասել, խմել, կրել	Գրուել, խմուել, կթուել
Գնաց, ասաց, խմեց, կթեց	Գրուեց, խմուեց, կթուեց
Գնած, ասած, խմած, կթած	Գրուած, խմուած, կթուած
Գնող, ասող, խօսող, գրող	Գրուի, խմուի, կթուի
Մեզ, սանք, թանձր, նօսք	Գրուող, խմուող, կթուող
	Արկղ, կոճղ, ասող, անգղ

Քարերը լինում են կարծր և փուլար: Նրանց հաց թխող և կով կթող կինը գնաց գիւղը: Բագրատի հեա խօսող աղան իմ բնկերն է: Աշտոն ասաց, որ շուտ կը գայ: Սազ ածող աշուղը երկու աչքով կոյր էր: Նրա գնած տանձը խակ էր: Աննան գնեց տողած տետրակներ: Արամը գրած դասը ցոյց տուեց մօրը: Նրա խմած դեղը դառը չէր: Զուրը ծանր է փայտից: Աշխէնի քոյրը խօսում է ծանր ու ցածր: Երեկ գիշեր մենք ոչ մի ասող չտեսանք: Դէզի տակը ծառի կոճղ կայ: Աննան ունի գրիչների արկղ: Անգղ անունով թռչուններ էլ կան: Դասը գրողը Միսակը չէր: Արշակի գիրքը պահողը Սեդրակն էր: Հօրից փող ուզողն Օհանն էր:

Բ ա գ մ ա վ ա ն կ ք ա ո ե ր .

Գիւղացի, քաղաքացի, շուշեցի, գանձակեցի, երեանցի-
Ծակծկել, վազվզել, չափչփել, ծւծւալ, փսփսալ, պսպղալ:

Քաջութիւն, խորութիւն, լայնութիւն, չարութիւն:

Քահանայ, երեխայ, առարկայ, բացակայ, ներկայ, ընծայ:

Բ-ժշ-կել, մկրտել, փշրտել, կտրտել, Մկրտիչ:

Կիրակի օրը դեղեցիկ եղանակ էր: Սեպտեմբեր ամիսն
ունի երեսուն օր: Ծաղիկը վարակիչ հիւանդութիւն է:
Յարութիւնն այս առաւօտ ուշացել էր դասին: Յովակիմը
համառօտ պատմեց դասը Մովսէսին: Բժիշկը շօշափեց
Վաղինակի ձեռքը: Մեր դպրոցում կան վարժուհիներ և
ուսուցիչներ: Առիւծի քաջութիւնը և փղի մեծութիւնը
ոչ մի չորքոտանի չունի: Մեր դասը հիմա գրութիւն է,
յետոյ կը լինի գծագրութիւն: Արմենակը մայրենի լեզուն
թողել է տանը: Բազէն վայրենի գիշատիչ թռչուն է:
Գազիկ, ամօթ է, սր ծուլութիւն և չարութիւն ես անում:
Մանուշակը հոտաւէտ ծաղիկ է: Տիգրանի հայրը քահա-
նայ է: Մեր դրացին երկու երեխայ ունի: Գիրքն անշունչ
առարկայ է: Եղիաբէթն այսօր ներկայ չէր դասին:
Հոփսիմէն մի քանի օր բացակայ էր դասերից: Հեղինէն
ասեղով ծակծկել է սփռոցը: Մանուկները վազվզում են
բակումը: Հաւի ճուար ծւծւում էր բնումը: Աստղերը
կայծերի նման պսպղում են երկնքում:

Բառի մէջ իա կարգացում է եա.

Անանիա, Ազարիա, Եղիա, Երեմիա, Զաքարիա, Սոփիա.
Կրիայ, միասին, ծիածան, ովկիանոս, միատեսակ, հիա-
նայի, միանալ.

Բենիամինի հօր անունը Եղիա է, իսկ մօր անունը՝ Սո-
փիա: Եղիագարի ուսուցիչը Պօղոսի մօտ է: Աշխէնը յի-
շում է տատի պատմած հէքիաթը: Արամը քարտէզի վրայ
ցոյց տուեց ովկիանոսները: Ամառը անձրևից յետոյ երե-
ւում է ծիածանը: Մարիամի քոյրը սովորում է կրօնը:
Սօսի և Անտօնի երեխաները միասին գնացին դպրոց: Ով-
սաննան պարտէզում մի կրիայ բունեց: Անանիան վերց-
րեց Սուրէնի գրիչները: Աբէլի մօտիկ ծանօթը Եղիան
է: Կուր դետը միանում է Արաքսի հետ: Յովսէփի քոյրե-
րը միատեսակ շորեր ունեն: Զաքարիան քաշում է հօր և
մօր կարօտը:

Ս հնչիւնը տ. պ. կ. հնչիւններից առաջ կարգացում է ըս.

Սպայ, սպասել, սպունգ, սպիտակ, ստամոքս, ստանալ,
ստորակէտ, ստինք, սկիզբ, սկսել, սկիւռ, սկիհ:

Ստեփաննոսը լաւ է սովորում Յովակիմից: Յարութիւնը
նամակ ստացաւ Յուսիկից: Յովհաննէսն ստուգեց խանու-
թից գնած տետրակները: Գոմէշի ստինքներից մէկն ու-

ուած է: Մեր դպրոցում դասերն սկսուած են սեպտեմբերի մէկից: Մասվաճառն առաւօտը վաղ գալիս էր սպանդանոցից: Սպան դուրս եկաւ զօրանոցից զօրքի հետ միասին: Հռիփսիմէն սկզբից թոյլ էր սովորում: Երեկ սքանչելի եղանակ էր: Մարիամն սփոփում էր հարեանի երեխաներին: Մայրն սթափեցրեց երեխաներին խոր քնից: Արան ստիպեց Պօղոսին, որ Մինասի հետ չխաղայ: Արշակը մի մուկն սպանեց գոմումը:

Մանօթ. Բացառութիւն կազմում են՝ ստախօս, սպըրդել, սփոսց, սփուել, թանէսպաս բառերը:

Զ հնչիւնը բ. և գ հնչիւններից առաջ կարգացւում է ըզ.

Ես զբաղւում եմ	Մենք զգում ենք
Դու զբօսնում ես	Դուք զբօսնում էք
Նա զգում է	Նրանք զբաղւում են:

Հռիփսիմէն կարեց Մաքրուհու նոր զգեստը: Ներսէսն ու Մովսէսն զբօսասէր տղաներ են: Իսկուհին յօժար է Զարուհու հետ դնալ քաղաքի զբօսավայրը: Անցեալ կիրակի քաղաքի պարտէզում զբօսանք կար: Կարկուտը յունիս և յուլիս ամիսներին զգալի վնաս տուեց արտերին: Սոխակն իւր ձայնով զմայլում է լսողին: Նունէն և Հեղինէն զբաղուած են իրանց դասերով: Խորէնն զգաց իւր սխալը: Ռուբէնը զգոյշ և խելօք տղայ է:

Շ հնչիւնը տ հնչիւնից առաջ կարգացւում է ըշ.

Աշոտ, ժամանակ է, շտապիւր դպրոց: Գալուստը ճաշից յետոյ շտապում էր գործարան: Շմաւոնն շտեմարանից ցորեն տարաւ շրագաց աղալու: Մինասը վաղօրօք պատրաստում է ամեն բան, որ յետոյ շտապելու կարիք չլինի:

Բառեր, որոնց վերջը յ չի գրւում.

Յ չի գրւում՝

- | | |
|----------------------------|----------------------------------|
| 1. Յատուկ անունների վերջը՝ | Սառա, Եւա, Եղիա, Սոֆիա. |
| 2. Յուցական դերանուն. | » սա, դա, նա, սրա, դրա, նրա. |
| 3. Հրամայական բառերի | » ասան, մնան, դնան, արան, խաղան. |
| 4. Հետևեալ | » » քո, հա, ահա, ապա, հիմա, այն. |

Եղիան, մնան տանը մինչև Եղիշէի գալը: Հեղինէ՛, հիմա գնան և քո գիրքը բեր: Սառան, սա է՞ քո մատիտը թէ՞ դա: Սոֆիան, ոչ ոքի վրայ մի խնդան: Եւան, ի՞նչու սրա-նրա զրքերը վերցնում ես առանց հարցնելու: Դեննգ, ասան Լեոնին, թող բանն պատուճանը: Գուրգէն, հա մի ասի, այն ասան: Նա հիմա եկաւ դպրոցից: Արամ, մի խաղա՛ Արշակի հետ: Գազիկ, հանգիստ խաղան, որ վայր չընկնես: Իսկուհի, ահա քո տետրակը, ապա ո՛ւր է իմը: Աշխէն, շուտ բաց արան դուռը:

Բառեր, որոնց վերջը յ գրւում է, բայց չի կարգացւում:

Յ գրւում է՝ ա, ո, (օ), ես վերջացող հասարակ անունների և գործողութիւն ցոյց տուող բառերի վերջը:

1. ա — տղայ, գաթայ, կայ, տայ, գայ, տեսայ, եկայ առայ, կը գայ, որ տայ, որ մնայ:
2. ո (օ) — յետոյ, երեկոյ, հաճոյ, սիրոյ, ձուլածոյ, կոփածոյ:
3. ես — պաշտօնեայ, քրիստոնեայ, գործունեայ ու թամեայ:

Արշակը գործունեայ տղայ է: Մենք քրիստոնեայ ենք: Արծաթեայ և ոսկեայ իրերը չեն ժանգոտում: Պողոսի հայրը քահանայ է: Մեր դպրոցը երկու ծառայ ունի: Ծառան փակեց երկաթեայ դուռը: Հարեանի մի ամեայ երեխան ծագիկ է ընկել: Փիղը հսկայ անասուն է: Աշխէնից յետոյ եկաւ Եղիսաբէթը: Սեղանի վրայ նոր գիրք կայ: Նա որ գայ, իմ ուսերէնը կը բերի: Վահան, անհաճոյ խօսքեր մի ասի: Նրա հայրը կը գայ այսօր կամ վաղը: Գերեզմանատանը ձուլածոյ պատկերներ կան:

Բառեր, որոնց վերջի յ կարգացում է.

Հայ, փայ, բայ, Նոյ հայը, փայը, բայը, Նոյը
Խոյ, թէյ, թայ, վայ խոյը, թէյը, թայը, վայը

Հայկի հօր անունը Նոյ է: Մեր ուսումնարանում գիւղացի հայ աշակերտներ շատ կան: Գործողութիւն ցոյց տուող բառը կոչուում է բայ: Մի գիւղացի երկու խոյ ծախեց: Վարսենիկը վայր էր ընկել աթոռից և վայ մայրիկ էր կանչում: Նրանց մի թայ (հատ) եզը հիւանդ է: Նա փայ արեց կակախները Պոռչի հետ: Մեր դրացի Նոյը երեք տղայ երեխայ ունի: Կորիւնը իւր փայը տուեց Գիւտին: Թոռօր թէյը շուտ խմեց ու գնաց գործի:

Ձ ա յ ն ա լ ո Ր ի ց յ ե տ ո յ յ է կ ա Ր դ ա ց ւ ու մ է ե .

Ես նայեցի Մենք ծառայեցինք
Դու վկայեցիր Դուք խնայեցիր
Նա ծառայեց Նրանք ընծայեցին

Արան յանձնեց հայերէնը Յովնանին: Այդ ուսերէնը պատկանում է Հմայեակին: Աշխէնը վճարեց հայելու արժէքը

Յասմիկին. Մարթան երեկոյեան Մարիամին տարաւ բազալի զբօսավայրը: Չաբէլը վայելչագրութեան տետրակը թողել էր տանը: Ներսէսը յայտնեց ուսուցչին իւր յաճախ բացակայելու պատճառները: Եղիսաբէթը տուեց Նոյեմզարին իւր կրօնի գիրքը: Նոյեմբեր ամսին ձիւն եկաւ: Գիւղացին խնայել է ձմեռուայ համար երկու դէզ խոտ: Սմբատը ծառայեց կօշկակարի մօտ չորս տարի: Յարութիւնն իրան վայելուչ է պահում: Հեղինէն վայելում է իւր ընկերուհիների սէրը և յարգանքը: Երեխան հայեացքն ուղղել է մօրը:

Ձ ա յ ն ա լ ո Ր ի ց յ ե տ ո յ յ է կ ա Ր դ ա ց ւ ու մ է ե .

Նա կը վկայէ,	Դուք կը նայէք	Նա եթէ ընծայէր
» » խնայէ	» » խնայէք	» » ծառայէր
» » ծառայէ	» » ծառայէք	» » վկայէր
» » ընծայէ	» » ընծայէք	» » նայէր

Բժիշկն այսօր պէտք է նայէ Սամուէլի դէմքի վերքը: Միքայէլի հայրը յունիս ամսին գնաց գիւղը: Ռափայէլը յանդուզն և յամառ տղայ է: Նա մի տարի ևս պէտք է ծառայէր, եթէ հիւանդ չլինէր, արհեստաւորի մօտ: Սէթն ու Յաբէթը, եթէ լաւ ծառայէին, նրանց պաշտօնից չէին հեռացնի: Վահանը, եթէ աշխատանքի մի մասը խնայէր, հիմա նեղութիւն չէր քաշի: Լևոն, Ղևնդ, դասին որ լաւ նայէք, դասը լաւ կը հասկանաք: Ընտանի անասուններին պէտք է լաւ նայէք, խնայէք, որ չհիւանդանան: Հայրը երեկոյեան Գագիկին նոր խաղալիք պէտք է ընծայէ: Միքայէլը Ռափայէլի մօտիկ ծանօթն է: Դուք ճիշտը պէտք է վկայէք Արամի մասին ուսուցչի մօտ:

Չայնաւորից յետոյ յի կարգացւում է չի.

Ես որ գայի	Դու եթէ գայիր	Նրանք կը մնային
» » տայի	» » մնայիր	» » տային
» » մնայի	» » գնայիր	» » գային
» » գնայի	» » տայիր	» » գնային

Ես կը գայի ձեզ մօտ, եթէ ցեխ չլինէր: Դու եթէ վաղ գայիր, նա տանը կը լինէր: Մենք այս ամառ կը գնայինք գիւղը, եթէ հայրս Նիւանդ չլինէր: Աննան ոտով օրօրում էր երեխայի ձօճը: Բժիշկը շօշափեց Եղիայի բազուկը: Արամայիսի հօր անունը Եսայի է: Այս մայիս ամսին հացաբոյսերի ցօղունները գեռ կանաչ էին: Այն տղայի անունը Ազարիա է, իսկ մօտ սնունը՝ Սոֆիա: Գարնանային ամիսներին խոտերի և բոյսերի վրայ ցօղ է լինում: Գարնանային և ամառային ամիսներին արևի զօրութիւնը շատանում է: Հայրն Արային ուղարկեց ծղօս ժողովելու անասունների համար:

Չայնաւորից յետոյ յու կարգացւում է իւ. (10)

Ես ծառայում եմ	Մենք խնայում ենք
Դու նայում ես	Դուք ծառայում էք
Նա խնայում է	Նրանք ընծայում են:

Սուրէնն այժմ լաւ է նայում դասին: Բազրատն անցեալ տարի ծառայում էր աղիւսի գործարանում: Եղիշէն գիրքը պահպանում է պայուսակում: Ոչխարը մայում է: Աշխէնը շոյում, փայփայում էր երեխաներին, որ լաց չլինեն: Յովսէփն ու Կարապետը յաճախ բացակայում են դասերից: Արամը լաւ է նայում հօրը և մօրը: Գեղամը և Գուրգէնը աշխատանքի մի մասը խնայում են սև օրուայ համար:

Գիւղացիք իրանց գոյութիւնը պահպանում են վար ու ցանով: Վահանը լաւ ծառայութեան համար նուէր ստացաւ:

Չայնաւորից յետոյ յո կարգացւում է եօ.

Ծառայող, խնայող, նայող, վկայողը նծայող, փայփայող. Ծեր հօրը և հիւանդ մօրը նայողը Լևոնն է: Աստուծոյ աշխատասէր ծառայող է: Նիկողայոսն ընկերասէր աշակերտ է: Տիգրանը յիշեց, որ հայոց լեզուի գիրքը թողել է տանը: Լուսիկին գիրք ընծայողը մօրաքոյրն էր: Գասերից յաճախ բացակայող աշակերտներից մէկն էլ Վասակն է: Մայրն զբաղուած է իւր երեխայովը: Մեր գիւղումը տղայոց երկու դպրոց կայ: Գատաւորը սուտ վկայողին օրէնքով խիստ պատժեց: Արսէն, այժմ դու ի՞նչ առարկայով ես պարապում:

Չայնաւորից յետոյ յա կարգացւում է եա (9).

Նայած, խնայած, վկայած, ընծայած, վկայական, կայարան, գոյական:

Արիստակէսի ընծայած ընկոյզների կէտը փուչ էր: Մատթէնսը խնայած փողով նոր գօտի գնեց: Չմեռը ջրից սառուց է գոյանում: Առարկայի անունը կոչւում է գոյական: Մենք ունենք հինգ զգայարանք: Առարկայի ներկայացրեց աւարտման վկայականը ծնողներին: Ազգարն ունի ծննդական վկայականի պատճէն: Թիֆլիսը հայաշատ բաղաբ է: Նոր-Բայազէթն ու Ալէքսանդրապոլը հայաբնակ քաղաքներ են: Երեկ բացակայած աշակերտներն այսօր մնացին առանց ձաշի:



59-05562

Այն ձայնաւորները, որոնք արտասանուած են յ հնչիւնի հետ, կոչուած են երկրարրաոններ:

այ-ա Տղայ, գայ, տայ, կայ, վրայ, մնայ, գնայ, տեսայ, եկայ, կը գայ, կը տայ:

ոյ-ո (օ) Յետոյ, երեկոյ, սիրոյ, հաճոյ, ձուլածոյ, կոփածոյ, գոյ, ներքոյ:

եայ-եա Քրիստոնեայ, գործունեայ, արծաթեայ, տանամեայ, առօրեայ, ոսկեայ, պաշտօնեայ:

այ-այ Այն, այս, այդ, հայր, մայր, գայլ, ժայռ, կայծ, կայք, պայտ, սայլ, փայտ:

ոյ-ույ Գոյն լոյս, բոյս, թոյն, թոյլ, կոյր, կոյս, ոյժ, յոյժ, յոյս, յոյն, նոյն, սոյն:

ոյ-օյ Նոյ, խոյ, բոյ:

յե-ե Նայել, խնայել, ծառայել, ընծայել, շոյել, հայելի, հրամայել:

յէ-ե ւայէ, ծառայէ, ընծայէ, վկայէ, խնայէ, հրամայէ:

յի-ի Տայի, գայի, մնայի, գնայի, ուշանայի, ստանայի, խաղայի:

յու-իւ Նայում է, ծառայում է, խնայում է, ընծայում է, հրամայում է:

յո-եօ Ծառայող, հրամայող, ընծայող, վկայող, շոյող, փայփայող:

յա-եա Խնայած, հրամայած, նայած, ընծայած, ծառայած, վկայած:

Բ հնչիւնը կարգացուած է փ, երբ բառը վերջանում է՝ ամբ, եամբ, որ և ր-ից յետոյ բ կայ:

1. Երբ, որբ, երբեմն, երբէք, սուրբ, նուրբ, Սրբուհի.
2. Անձամբ, մասամբ, դիտմամբ, սխալմամբ, ստիպմամբ.
3. Հեզութեամբ, բարութեամբ, տաքութեամբ, մաքրութեամբ.
4. Յակոբ, Սերօբ, Քերօբ, Մերօբ, Յօբ:

Ուրբաթ օրը խիստ տօթ էր: Շաբաթ օրը տօն է: Եսաւը կամենում էր վրէժ առնել Յակօբից: Խաբէր ծանր յանցանք է: Քերօբը նայում էր գիւղի փոքրիկ ջրվէժին: Սրբուհին երեկոյեան թէժ կրակ արեց: Յովսէփի հայրը դարբին է: Սուրբ Մերօբը մեծ ծառայութիւն է արել հայերիս: Սուրբ կոյս Մարիամը ծնուել է Նազարէթ քաղաքում: Սերօբը յօժար է միշտ Յուսիկի հետ դաս սովորել: Իսկուհին յայտնի է իւր հեզութեամբ և համեստութեամբ: Աբէլը իւր ծուլութեամբ և շարութեամբ զգուեցրել է բոլորին: Յովսէփին անձամբ ստուգեց Քաբբէլի գնած տետրակները: Շահէնը համբերող տղայ է: Հարեցողները շուտ են հիւանդանում: Երեխաները եկեղեցում համբուրեցին ս. Խաչը և Աւետարանը:

Ծանօթ. Բացառութիւն կազմում են՝ բարբառ, բարբարոս, սորբօքել, տարբեր, պարբերութիւն:

Հետևեալ հնչիւնները միասին կարգացուած են՝		
դբ—խպ	դձ—խց	դշ—խշ
Ողբ,	Գեղձ	Ողջ
աղբ	ատաղձ	ոռողջ
եղբայր	մաղձ	ամբողջ
աղբիւր.	գեղձ	չղջիկ.

Աբէլի մեծ եղբօր անունը կայէն էր: Խաչիկն անասունների աղբը տարաւ պարտէզը: Պոօշի փոքր եղբայրը համբ է: Տղայոց դպրոցում աղջիկներ էլ են սովորում: Գեղձանիկը գեղեցիկ թուշուն է: Սեղաններն ու աթոռները շինում են ատաղձից: Դրացու այգում երկու գեղձի ծառ կայ: Գալուստն այժմ առողջ է: Եղջերուն ունի երկար եղջիւրներ: Չղջիկը թուշում է միայն գիշերները: Խորէնը զղջաց իւր արածը: Հմայեակն ու Պետրոսը ամբողջ օրն անցկացրին պարապ: Մինասի պապը ողջ է:

Գ հնչիւնը կարգացուած է ք՝ օ, ձ, ր հնչիւններից յետոյ, բառի մէջը և վերջը:

1. Երգ, միրգ, պարգև, Մարգար, Սարգիս, Գէորգ, ձգել, օգուտ:
2. Գրիգոր, Բագու, թագաւոր, Թագունի, էգուց, հոգևոր:
3. Մոգ, շոգ, գոյգ, նժոյգ, գոգ, մարագ, կարագ, ճրագ, մուգ:

Օգոստոս ամսին շատ շոգ է լինում: Գէորգը յարգն ածեց մարագը: Բագուն մեծ բաղաք է: Մոմի ճրագն աղօտ է լոյս տալիս: Գոմէշի ձագն էգ է: Պարսից Յագկերտ թագաւորը շատ զօրք և մոգեր ուղարկեց Հայաստան: Թագունին գոգնոցը զրեց գոգը: Սարգիսն սպունգով սրբեց զբատախտակը: Յոգնած ժամանակը սառը ջուր չսէտք է

խմել: Որմնադիրը լարը ձիգ ձգեց: Մովսէս մարգարէն հրէաներին օրէնքներ տուեց: Աշոտն ու Սմբատը բակում վեգ էին խաղում: Մենք ունենք հոգի և մարմին: Գագիկն անկարգ և անհոգ տղայ է: Ընտանի անասունները մեծ օգուտ են տալիս մեզ: Արսէնը միշտ օգնում է հօրը:

Ծանօթ. Բացառութիւն կազմում են՝ արգանակ, արգասիք, զարգանալ, արգաւանդ, յարգ, զորգ, յարգել, յարգանք:

Գ հնչիւնը կարգացուած է թ, երբ բառն սկսուած է ընդ նախադրութեամբ և երբ դ-ից առաջ ր կայ:

1. Ընդունակ, ընդունել, ընդհանուր, ընդհատել, ընդգէմ:
2. Արգ, մարգ, վարգ, զարգ, ջարգ, բարգ, կախարգ:
3. Որգ, յորգ, որսորգ, օրիորգ, քառորգ, նախորգ, երկրորգ:
4. Բուրգ, ածուրգ, խառնուրգ, խորհուրգ, ժողովուրգ, յագուրգ:

Վարդունին և Վարդն այսօր քառորդ ժամ ուշացել էին գասին: Որդերը մեծ փնաս են տալիս բոյսերին: Հիմա արդէն ժամի ասան է: Վարդան, արգեօք Պօղոսը ո՞ր ժամին կը լինի տանը: Նոյ նահապեան ունէր երեք սրգի: Բարի մարդկանց յիշատակը յաւիտեան կը մնայ: Որսորդն առաւ գէնքերը և գնաց որսի: Մարթան ընդունակ աշակերտունի է: Նունէին ընդունեցին օրիորդաց դպրոցում: Նա սովորում է երկրորդ բաժանմունքում: Արշակը լաւ է կարգում դասը: Երեկ յորգ անձրև եկաւ: Ոչխարը յիմար, անգէն ու անգօր կենդանի է: Յիսուսը մկրտուեց Յորդանան գետում: Սառն օդը թանձր է լինում, իսկ տաք օդը՝ նսօր: Մեր զրացու անունը Թագէտս է: Չեռներն ու ոս-

ները մարմնի անդամներն են: Վարդանը խնդրեց Վստակին, որ դասը պատմի:

Ծանօթ. Բացառութիւն կազմում են՝ յարդ, սարդ, խլուրդ, խարդախ, քուրդ, բարդի:

Ձ հնչիւնը ը-ից յետոյ կարգացւում է ց:

Որձ, փորձ, փորձանք, արձան, արձակ, հանդերձ, համարձակ, բարձր, դերձակ:

Օձը թունաւոր սողուն է: Աննա, կարգա դասդ բարձր և ծանր: Սենեակի բարձրութիւնը շորս արշին է: Գերեզմանատանը շատ արձաններ կան: Ծունը յանկարծ յարձակուեց մուրացկանի վրայ: Համբարձման տօնը կատարում ենք Ձատկից քառասուն օր յետոյ: Նա դարձեալ դասը չգիտէր: Արամայիսը շուտ վերադարձաւ զբօսանքից: Հոգաբարձուներն այսօր եկան դպրոց: Դերձակը կարեց Հմայեակի համար նոր հանդերձներ: Եղիան համարձակ աղայ է: Մեր դպրոցն ունի ընդարձակ բակ: Քիչ բարձի, շուտ դարձի: Միքայէլն ու Սաչատուրը խուրձը բարձեցին սայլը: Միսակն իրանց որձերը տարաւ արածացնելու: Գիւղացին շուտ արձակեց եգները սայլիցը: Պետրոսն այսօր հազիւ ազատուեց փորձանքից: Փոքրիկ աքաղաղին որձակ էլ են ասում:

Ղ հնչիւնը կարգացւում է խ.

Յիսուսը ծնուեց Բեթղեհէմ քաղաքում: Յոպոպը կեղտոտ թռչուն է: Հայկ նահապետը յաղթեց հսկայ Բէլին: Մկրտտիչը շղթայով կապեց շանը: Վահանը գնեց սպիտակ թուղթ: Այսօր եկեղեցում մաղթանք կատարեցին: Գայլն

ան է: Երկու օր է գետի ջուրը պղտոր է: Մեղրը քաղցր է: Քաղցած շունը խոտ էլ է ուտում: Գաղթականները գնացին հայրենիք: Աղքատ մարդը ողորմութիւն էր խնդրում անցորդներից: Ծառերը ծաղկում են գարնանը: Յիսուսը յանդիմանում էր կեղծաւոր մարդկանց: Նա դուռը փակեց կողպէքով: Նա սխալմամբ բաղխեց հարեանի դուռը: Արամի հայրը յաղթանդամ մարդ է:

Ջ հնչիւնը կարգացւում է չ՝ ը-ից յետոյ, բառի մէջը և վերջը:

1. Աջ, էջ, մէջ, առաջ, տիկնոջ, քրոջ, տիրոջ, բողբոջ:
2. Արջ, որջ, մըջիւն, վերջ, թըջել, վերջակէտ, վերջապէս:
3. Միջատ, միջակ, միջնակ, միջոց, յաջող, յաջորդ:

Արջը վայրենի գազան է: Վարդանի աջ ձեռքի վրայ վերք կայ: Նա կարգացել է նոր գրքից մի քանի էջ: Ազուէնն ապրում է անտառում որջերի մէջ: Կոմլու ունի լայն մէջք: Դշխունին առաջուց է պատրաստում ամեն բան: Այսօր մեր առաջին դասը հայերէն էր, իսկ յաջորդը՝ կրօն: Սուրբ էջմիածինը հիմնել է Գրիգոր Լուսաւորիչը: Մովսէս մարգարէն էր առաջնորդում հրէաներին Աւետեաց երկիրը: Այսօր մեր դասերը շուտ վերջացան: Թաղէտսի միջնակ եղբօր անունը Աղէքսանդր է: Արուսեակը միջնորդեց մօր առաջ, որ այս անգամ ների Յասմիկին: Մարիամը միջամտեց և վերջ տուեց Աննայի և Եւայի մէջ ծագած վէճին:

Ծանօթ. Բացառութիւն կազմում են՝ շուրջ, կամուրջ, շրջան, շրջիկ, շրջել:

հոգէառ, հոգս, հոգեկան, հոգոց, ձագ, ձգել, ձգձգել, ձգտել ձիգ, ձգնաւոր, ձգնել, ճիգ, ճրագ, ճրագու, մարգագետին, մագաղաթ, մարագ, Մարգար, մարգարէ, մարգարիտ, մոգ, մուգ, յոգնակի, յոգնել, նժոյգ, նորոգել, շոգ, ոգի, ոգևորել, ուրագ, պատարագ, պարգև, սարկաւագ, սուգ, օգնել, օգուտ, օգոստոս, օգտակար:

Դ կարգացում է Թ.

Աճուրդ, անդամ, արդ, արդար, բարդ, բերդ, բուրդ, դուռմ, դրդել, երդ, երդիկ, երդում, երդուել, երիտասարդ, երկրորդ, երրորդ, դարդ, ընդունակ, ընդունել, ընդհանուր, թակարդ, ժողորդ, զարդ, ընդունակ, ընդունել, ընդհանուր, թակարդ, ժողորդ, զարդ, խառնուրդ, խնդիր, խորհուրդ, կարդալ, կախարդ, կենդանի, կոկորդ, մարդ, յագուրդ, յորդ, յորդորել, նախորդ, նաւասարդ, որդ, որդի, ջարդ, վարդ, վարդավառ, վարդապետ, վառուր, որդեգիր, տասանորդ, քսանորդ, օրիորդ, օդ: Վարդ, Վարդան, Տրդատ, Ղարդանուշ, Վարդուհի, Թագէս, Յուրդ, Յորդանան:

Զ կարգացում է ց.

Արձակ, արձան, արևադարձ, արձակուրդ, բարձ, բարձել, բարձր, դարձեալ, դերձակ, դերձան, ընդարձակ, խուրձ, համարձակ, հանդերձ, Համբարձում, հոգաբարձու, յորձանք, որձ, որձակ, վարձ, փորձ, փորձանք, օձ, արձագանք, ուղերձ:

Ղ կարգացում է խ.

Աղքատ, աղտ, բաղխել, բղխել, գաղթել, գաղտնիք, գեղխ, գեղծել, թուղթ, ծաղկել, կեղծ, կեղծաւոր, կեղտ, մաղթանք, մեղք, մղկտալ, յաղթել, յաղթող, յաղթութիւն, ուղտ, շղթայ, պղտոր, տաղակալի:

Ջ կարգացում է չ.

Աջ, աջակից, առաջ, առաջին, առաջարկ, առաջուց, առաջնորդ, առջ, բողբջ, զիջել, էջ, էջմիածին, իջնել, մէջք, միջակ, միջատ, միջնակ, միջուկ, միջոց, միջնորդ, միջամտել, միջօրէակ, կան, Միջագետք, Միջերկրական, միջակէտ, վերջ, վերջալոյս, վերջակէտ, վերջանալ, մէջտեղ, մէջմէջ, ընկերոջ, տիրոջ, բռնոջ:

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն.

Ըս

Սպայ, սպանդանոց, սպանել, սպառել, սպառնալ, սպաս, սպասաւոր, սպասել, սպարապետ, սպիդանի, սպի, սպիտակ, ստակ (փող), ստահակ, ստամոքս, ստանձնել, ստեղի, ստեղծել, Ստեփաննոս, ստինք, ստիպել, ստոյգ, սանտու, ստոճանի, ստոր, ստորակէտ, ստորոտ, ստուեր, ստրուկ, սկեսար, սկսել, սկիզբ, սկիհ, սկսնակ, սթափուել, սփոփանք, սփոփել, սքանչելի, սքողել:

Ըզ

Չբաղմունք, զբաղուել, զբօսանք, զբօսավայր, զգալ, զգայաբանք, զգայուն, զգաստ, զգեստ, զգոյշ, զմայլել, զլօն:

Ըշ

Շտապ, շտապել, շտեմարան:

Բ կարգացում է փ.

Ամբիոն, արբունք, արիւնարբու, Բաբկէն, Գարբիէլ, գարբին, դարբնոց, երբ, երբեմն, երբէք, իրբ, իբրև, խաբել, խաբերայ, խաբուսիկ, ձամբայ: Մեսրոբ, Յակոբ, Յոբ, ներբող, նուրբ, որբ, որբանոց, սուրբ, Սրբուհի, սրբազան, սրբութիւն, սրբավայր, սրբել: Երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ:

Գ կարգացում է ք.

Անգամ, աւագ, Բագու, Գէորդ, Գրիգոր, գոգ, գոգնոց, երգ, երգել, երգեցիկ, երկրպագել, գոյգ, գուգս, գուգել, էգ, էգուց, թագաւոր, թագունի, թագուն, թարգմանել, ծագել, կարագ, կարգ, հագնել, հագուստ, հոգի, հոգևոր, հոգեհանգիստ, Հոգեգալուստ:

աիկնոջ, թրջել, հաջել, որջ, մըջիւն, մըջնանոց:

Ղը կարգացում խպ.

Աղբիւր, եղբայր, ողբ, աղբ, աղբատ, աղբանոց, կողբ:

Ղձ կարգացում է խց.

Ատաղձ, գեղձ, գեղձ, գեղձանիք, իղձ, մաղձ:

Ղջ կարգացում է խչ.

Ամբողջ, անողջ, աղջիկ, գեղջ, զղջալ, գեղջուկ, չղջիկ, ողջ, ողջոյն, ողջակէզ, շեղջ:

Յ-ի կ ա ն ո ն .

Յ գրւում է և կարգացում է ճ՝

1. Միայն ձայնաւոր հնչիւններից և ղ բաղաձայնից առաջ: Խա-
ցառութիւն կազմում է յստակ բառը:
2. Ա, ո, (օ) և ես վերջացող հասարակ անունների և գործողու-
թիւն ցոյց տուող բառերի վերջը:
3. Երկու ձայնաւորի մէջ գրւում է յ: Միայն է և ի ձայնաւոր-
ների մէջ յ չի գրւում:
4. Այ, ոյ երկրորդականներում: Եթէ այ և ոյ-ի վերջը բաղաձայն
չկայ, կարգացում է ինչպէս ա, օ, իսկ եթէ բաղաձայն կայ՝ այ, ույ:
Ծանօթ. 2, 3 և 4 կանոնների մասին տես այս գրքի 8 երեսը:

Յագինալ (կշտանալ), յագուրդ (չափից դուրս ուտել), յախ-
ձապակի, յաղթանդամ, յաղթել, յաղթութիւն, յաճախ (շուտ-
շուտ), յաճախել (գնալ), յամբ (կամաց), յամառ (իրան ասածի),
յայտնաւորք (գիրք, որի մէջ գրուած են սրբերի կեանքը), յայտնի
(նշանաւոր), յախուռն (թափթփած, շող տուած): Յանդուզն (խօս-
քը չձանաչող, մեծ և փոքր չգիտեցող), յանկարծ (միանգամից),
յանձնել, յանցանք, յապաղել (ուշանալ), յաջող, յաջորդ, (հե-
տեալ), յատակ, յարատե (մշտական), յատկութիւն, յատկացնել,
(նշանակել, տալ, որոշ ժամանակով կամ նպատակով), յարգ (պա-
տիւ), յարգել, յարգանք, յարդ (զարման), յարուցանել, յարձա-
կուել (վրայ ընկնել), յարմար, յաւիտեան (անվերջ), յափշտա-
կել (զօռով փախցնել, խել), յեղափոխել (հակառակն անել),
յեա, յետին, յետոյ, յիմար, յիշատակ, յիշել, յիշողութիւն,
յիտուն, յղանալ, յղկել (հարթել), յղփանալ (շատ ուտել),
յողնակի (շատ), յոգնել, յոյժ (խիստ), յուզումնք (վրդովմունք)

յոյն, յոյս, յոպոպ, յորդ (վարար), յորդորել, (խորհուրդներ տալ) (յոռի վատ, գէշ), յոխորտալ (մեծ-մեծ խօսել), յոռետես (վատ կարծիք ունեցող) յորջորջել (կոչուել), յուշարար (յիշեցնող), յունիս, յուլիս, յունուար, յուշիկ (ծանր), յօդ (մատնների խաղը, ու, դ, ր, ն. հնչիւնները), յօդուած, յօժար, յօնք (ունք), յօրինել (հնարել) յօշոտել (թիքա-թիքա անել), յօրանջել (բերանը բաց ու խուփ անել):

Գայլն անյագ գազան է: Յուսիկը յագեցրեց ծարաւը եփած ջրով: Յովազը վայրենի կենդանի է: Յոպոպը կեղտոտ թռչուն է: Մի շուն յանկարծ յարձակուեց Յովակիմի և Յարութիւնի վրայ: Բարի մարդկանց յիշատակը յաւիտեան կը մնայ: Սուրբ Սահակն է յօրինել մեր շարականների ութ ձայն եղանակները: Յասմիկն զգօն աղջիկ է: Յիսուսը մկրտուեց Յովհաննէսից Յորդանան գետում: Արէլ, Գնէլ, Միքայէլ յատուկ անուններ են: Յունիս և յուլիս ամիսներին շատ շոգ է լինում: Երեխան նստել էր յատակին: Մշակը շատ աշխատելուց յոգնել էր: Եթէ միւսնոյն աւարկայից շատ չայ, կոչուում է յոգնակի: Ամառը յորդ անձրևներ են գալիս: Յարէթը յորդորում էր Յովսէփին, որ դասերը լաւ սովորի: Լաւ աշակերտը իւր յոյան ուրիշների վրայ չպէտք է դնի: Այս տարի գիւղացիների գործն յաջող էր: Անյաջողութիւնից չպէտք է յուսահատուել: Այս գիրքն յառաջարան չունի: Մէթը պատերին յայտարարութիւններ էր կայցնում: Մեր սենեակըն ամեն տեսակ յարմարութիւն ունի: Սորէնն ու Ջարէհը յարմար պաշտօն են գտել իրանց համար: Կարապետը մօտիկ յարութիւն ունի Պօղոսի և Անտօնի հետ: Յիսուսի աշակերտներից մէկի անունը Յուզա էր: Դրացու փոքր տղան թուխ յօնքեր ունի: Արամի պապը նստած տեղը յօրանջում է: Գայլը Բարսիկանց հօտից մի ոչխար է յափշտակել ու յօշոտել: Յովսէփը խելօք տղայ է: Աշխէնը յօժար է միշտ Իսկուհու հետ դաս սովորել:

Օ-ի կ ա ն ո ն .

1. Տօթ, քօթ, անօթ, անօթի ամօթ, աղօթք, թնդանօթ, ամօթխած, ծանօթ, թօթափել, թօթով:
2. Առաւօտ, հօտ, մօտ, ծնօտ, ձգօտ, արօտ, կարօտ, հօտաղ, նա-

- րօտ, նօտար, նօտր, կարճառօտ, գօտի, համառօտ:
3. Տօն, թօն, յօնք, կրօն, ձօն (մէկի պատուին յօրինուած ոտանաւոր), զգօն (լուրջ, խելօք), Անտօն պաշտօն:
 4. Արօր, հօր, օրօր, յօրինել, հօր, մօր, եղբօր, յօրանջել, մօրուք:
 5. Զօդ (կապ), յօդ, յօդուած, յօդակապ, յօդացաւ, վառօդ:
 6. Զօրք, խօսք, խելօք, իրօք, նախօրօք, վաղօրօք, ցօղ, քօղ, ցօղուն, Պօղոս, զօղանջիւն (եկեղեցու զանգի ձայն):
 7. Դրօշ, դրօշակ, թեղօշ (ծառ), թօշնել (թառամել), լօշ, շօշափել, կօշիկ, Պոշ, քօշ:
 8. Ակօս, արօս (թռչուն), Սօս, սօսափիւն, զրախօս, ստախօս, նօսը:

Սուրբ Մեսրօբը յօրինեց հայոց տառերը: Երեկ խիստ տօթ էր: Բօթը վշտացրեց ծերունուն: Ծառան մաքրեց ձէթոտ և իւղոտ անօթները: Աստղիկ, ամօթ է, որ դաս չես սովորում: Յակօբը յօժար է կատարել իւր ընկերների՝ Պօղոսի, Անտօնի և Սօսի խընդիրը: Պօղոսը հօր, մօր և եղբօր հետ գնաց պարտէզն զբօսնելու: Յովսէփը իւր խօսքի տէրն է: Սօսն զգօն տղայ է: Պոշը ձօն է յօրինել իրանց դպրոցի արերարի համար: Յովակիմը լօշի կտորը տուեց շանը: Մեր քաղաքում մայիսին տօնավաճառ է լինում: Այն գիրքը, որ ցոյց է տալիս տօները, կոչուում է տօնացոյց: Ասլանի հայրը նօտար է: Մկրտիչը նօսը մազնր ունի: Գալուստը համառօտ պատմեց կրօնը: Յարութիւնը կանգնել էլ զօրանոցի դիմացը: Մեր քաղաքում շատ գօրք կայ: Երեխան դօշը (կուրծք) բաց էր ման գալիս: Երեկ չէ միւս օրը քաղաքը զարդարուած էր դրօշակներով: Իրօք, որ Անտօնը հեղ և համեստ տղայ է: Այս առաւօտ խոտերի վրայ ցօղ կար: Հմայիակն ասաց աղօթքը: Սաշիկը Մինասանց հօտաղն է: Նրանց սև շունը հօտի մօտ է: Մեր տունը մօտիկ է դպրոցին: Հովիւը հօտը տարաւ արօտ: Յունուարի մէկին մեր դպրոցում տօնածառ կար: Արշակը կարօտ է հօր, մօր և եղբօր տեսութեանը: Քահանան նարօտը կապեց երեխայի վիզը: Վառօդը շուտ է բռնկուում: Բժիշկը հետազօտեց Գալուստի ծնօտի վէրքը: Ծառան գնաց արտը ձգօտ ժողովելու: Արշակը թօթովախօս է: Ասիւծը հօր և գօրեղ գազան է: Պապը անընդամ էր մօրուքը: Սարգիսը հօր պատուէրով հօրից ջուր հա-

նեց: Մէզի պատճառով գիւղացին միայն մի քանի ակօս վարեց: Պետրոսն այժմ լաւ պաշտօն ունի: Մայրը շօշափեց Մինրանի բազուկը: Երեխան պարկած է ճօճում:

է-ի. կ ա ն ո ս .

է գրուում է, երբ բառը վերջանում է՝

1. Է՝ նունէ, բազէ, բոպէ, Հեղինէ, նայէ, վկայէ, թէ, եթէ.
2. Էր՝ սէր, տէր, գէր, հէր, մէր, ծէր, հրաւէր, նուէր, պատուէր.
3. Էք՝ բերէք, տարէք, գրեցէք, նայէք, խնայէք, տեսէք, խմեցէք.
4. Երէն | ուսերէն, վրացերէն, հայերէն, Ռուբէն, Արսէն, Շահէն.
Եղէն | ոսկեղէն, երկաթեղէն, մսեղէն, կանաչեղէն, շաքարեղէն.
5. Էլ՝ գէլ սէլ, Գնէլ, Աբէլ, Բէլ, Զարէլ, Ռափայէլ, Միքայէլ, Դանիէլ.
6. Էս՝ ներսէս, Մովսէս, Վրթանէս, Արիստակէս, Յովհաննէս, Կէս, ծէս, կրկէս, հանդէս, այսպէս, նոյնպէս, ազուէս, որպէս.
7. Էս՝ հոտաւէտ, խոտաւէտ, ծառաւէտ, պտղաւէտ, ծաղկաւէտ, գինեւէտ.
1. Կէտ, տգէտ, աղէտ, առնէտ, թէպէտ, գէտ-վէտ է (Ղրի փրփրալը).
2. Դէզ, սէզ, բզէզ, խլէզ, քարտէզ, պարտէզ, ասպարէզ, պնակալէզ, արևակէզ.
3. Մէզ, տէզ, սէզ (հպարտ), վէզ, եղէզ.
4. Լէշ, փէշ, կէշ, գոմէշ, պատնէշ, հրէշ.
5. Դէմք, գէնք, վէրք, օրէնք, գէպք, պէտք, անէծք.
6. Մէկ, կոպէկ, շէկ.
7. Ձէթ, խէթ, գէթ, գմբէթ, Սէթ, Յարէթ, մանէթ.
8. Թէժ, խէժ, վրէժ, ջրվէժ.
9. Վէպ, հանդէպ, սակաւապէտ, անվրէպ, ստէպ-ստէպ (կրքեմն).
10. Վէմ, դէմ, մէջ, մէջք, առէջք, հրշէջ, անշէջ.
11. Քէֆ, բէհ, գէհ, քրէհ.

Ովսաննանց ցոյց տուեց քարտէզի վրայ ովկիանոսները: Յովհաննէսն ու Արիստակէսը հիմա պէտք է գան մեզ մօտ: Արաաշէսը գնում էր գէպի տուն: Ստորակէտը, միջակէտը, վերջակէտը և բութը կոչուում են կէտազրութեան նշաններ: Երեխաները բազուկ վէզ (կոճի) էին խաղում: Պօղոսն ու Պոօշը վերջ տուին իրանց

վէճին: Մարիամը նստել էր Գայիանէի հանդէպը: Բզէզը միջատ է, իսկ խլէզը-մողէսը՝ սողուն: Շունը գուրսը լէշ էր ուտում: Արշամը եղէզից պիւռ շինեց: Սառան կարեց գոգնոցի փէշը: Դէորզը մի ֆունտ ձէթ առաւ: Ընկերոջը խէթ (ծուռ) աչքով նայելը ծանր յանցանք է: Միւր եկեղեցին գմբէթ չունի: Յովսէփն ու Աբէլը գնացին գիւղը: Վատ երեխաներին հրէշ էլ են ասում: Աղուէսը խորամանկ գազան է: Դատաւորն օրէնքով խիստ պատժեց յանցաւորներին: Եսաւը կամենում էր Յակոբից վրէժ առնել: Թամարը երեկոյեան թէժ կրակ արեց:



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.



Blank green page, possibly a flyleaf or endpaper, showing signs of wear and discoloration.

APM.
3-2362

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Վաճառում է Ս. Աւագեանի գրախանութում:

Handwritten mark

2512

2013

«Ազգային գրադարան»
NL0061696

